6-ՐԴ ՆԻՍՏ

10 օգոստոսի, շաբաթ, երեկ. ժամը 7-ին,1918թ.

Նախագահ՝ *Ավ. Սահակյան*

Խորհուրդը նախ զբաղվում է սպա Վարդան Առաքելյանի հետևյալ խնդրով. հունիսի 6-ին Սարդարապատում տեղի ունեցող կռիվների ժամանակ, երբ հայտնի են դառնում Բաթումի դաշնագրի ծանր պայմանները, հուզված ժողովուրդը ցույցի ժողով է կազմակերպում Ազգային Խորհրդի առաջ և պորուչիկ Վարդան Առաքելյանը գրգռել է ժողովրդին իշխանության կարգադրության դեմ՝ հորդորելով շարունակել պատերազմը: Ժողովը ցրվել է ոստիկանական ուժով, իսկ սպա Առաքելյանը հետևյալ օրը զինվորական դատարանի կողմից դատապարտվել է 3 տարվա բանտարկության և որոշ իրավունքների զրկման: Այժմ նա խնդրում է Հայաստանի Խորհրդին՝ ներել:

Գործի մասին զեկուցում է բերում արդարադատության նախարար *Գ. Պետրոսյանը*, առաջարկում է ներել Առաքելյանին, որովհետև նա նպատակ չի ունեցել տապալել կառավարությունը, այլ իր հայրենասիրական պարտքն է կատարել:

Վիճաբանություններից հետո, խորհուրդը 21 ձայնով որոշեց ներել սպա Վարդան Առաքելյանին և վերականգնել նրա բոլոր իրավունքները:

Ապա խորհուրդը, ըստ ավագների խորհրդի աջակցության, ընտրեց տեղական վարչությունների և ինքնավարությունների, դպրոցական, պարենավորման, գաղթականական, բժշկա-առողջապահական, հողային և աշխատանքի հանձնաժողովները: Բոլոր հանձնաժողովների մեջ ընտրվեցին երեքական հոգի դաշնակցական և մեկական հոգի՝ մյուս ֆրակցիաներից:

Նախագահը հայտարարում է, որ կառավարության կողմից երկու օրինագիծ է ներկայացված խորհրդին՝ մեկը՝ պետական հսկողության, իսկ մյուսը՝ պետական ծառայողներին միանվագ նպաստ տալու մասին: Օրինագծերը հանձնվում են համապատասխան հանձնաժողովների նախնական քննության:

Ի վերջո, հաստատ[վ]եց խոր[հրդի] ներքին կանոնագիրը,** որին իբրև հիմք ընդունվել էր Անդրկով[կասյան] Սեյմի նակազը: Առանձին-առանձին կարդացվեցին և քննության առնվեցին միայն այն հոդվածները, որոնք փոխված էին հանձնաժողովում կամ ընդունված էին ոչ միաձայնությամբ:

«Զանգ», 17 օգոստոսի 1918թ.

---

* Խոսքը Խ. Կարճիկյանի մասին է:-Ծանոթ. կազմ.:

** Կանոնագիրը տես հավելվածում:-Ծանոթ. կազմ.: